

ՀԱՂՈՐԴՈՒԲՈՆԵՐ

ՀԱՅԿՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Վենետիկի Մխիթարյան միաբանության երեւելի այրերից էր ականավոր պատմաբան, աշխարհագրագետ, ազգագրագետ, բանասեր, բանաստեղծ, լրագրող-խմբագիր Ղուկաս Ինճիճյանը:

Ղուկաս Ինճիճյանը ծնվել է Կ. Պոլսում 1758թ. մարտի 21-ին: Նրա մեծ հայրը աղքատապաշտեցի Ինճիճի Հաջի Միքայելն էր, իսկ հայրը՝ Ինճիճի Պողոս Միքայելյանը: Մայրը՝ Տիրուհին, պատմաբան Միքայել Չամչյանի քույրն էր ¹: 1770 թ., երբ Ղուկասն ընդամենը 12 տարեկան էր, հայրը նրան ուղարկում է Վենետիկի Մխիթարյան միաբանություն, որտեղ արդեն գտնվում էին իր երկու մորեղբայրները՝ Հակոբ եւ Միքայել Չամչյանները²: Այնտեղ նա աշակերտում է միաբանության աբբահայր Ստեփանոս Ազոնց Գուվերին: Մի միջավայր, որը չէր կարող չանդրադառնալ Ինճիճյանի անձի ձեւավորման վրա, գերհարգելիների մի սերունդ՝ Հ. Հովհաննես Զոհրապ, Հ. Սուքիաս Սոմալեան, Հ. Մինաս Բժշկեան, Հ. Մանուել Զախչախեան եւ ուրիշներ, որոնց հետ համագործակցել է Ղուկաս Ինճիճյանը³:

Ինճիճյանը համապատասխանում էր նոր հայի, հրապարակագրի, պոլսեցու կերպարին: Ն. Անդրիկյանի համոզմամբ՝ Ինճիճյանն այս որակները ձեռք էր բերել մեծ սիրտ ու ոգի ունեցող մորից: Այստեղ տեղին է ներկայացնել Ինճիճյանի մոր՝ Տիրուհու նամակից մի հատված.

«Երկու աչացս լոյս որդւոց իմոց Աղեքսանդր կրօնաւորին եւ Ղուկաս նորրնձային, ողջոյն:

Գիշեր ցերեկ աչքս ճանքան էր թե՛ աճապ էրք պիտի գայ ինձ աւետեաց խաւար: Երբոր որ առի թուղթը աւետեաց ուխտին Աղեքսանդր

1 Տե՛ս «Մխիթարեան Յօրելեան», 1701-1901, Վենետիկ, 1901, էջ 95:

2 Այլն Հովհաննես, Մխիթարեանք գրականութեան հանդէպ, Վենետիկ, 1902, էջ 46:

3 Հ. Ն. Անդրիկյան, Հ. Ղուկաս Ինճիճեան, տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1912, թիվ 1, էջ 41:

որդոյս, այնչափ ընձի մեծ ուրախություն եղաւ, այնչափ խնդացի, այնչափ ուրախացայ, որ աչքէս արձունք եկաւ խնդալուս: Ան սահաթը չորեքայ Աստուածածնայ պատկերքին առջեւը, էօմբիւմ աստուածածին, ըսի. շնորհակալ իմ որ իս աս սահաթներուն հասուցիր: Ընձի պէս տէրտիմէներ մեղաւորին ձանը լսեցիր: Ես արժան չէի աս անտեացս. իս արժանի ըրիր: Կաղաչեմ կպաղատիւմ Սուրբ Աստուածածին, որ անփորձ եւ անասասն պահես, սատանային փորձանքներէն փրկես՝ ազատես. օր աւուր վրայ քու ամէն շնորհներովդ զարդարես. խոր ծերութեան հասցնես իմ որդին որ ելաւ զատվեցաւ իզմէ, եւ քեզ որդեգիր եղաւ: Ես քեզի ընծայեցի. եւ դու ընդունեցիր. շնորհակալ եմ քեզ. եւ հազար փառս կը մատուցանեմ որդւոյդ, ա՛ռ եւ պահէ՛ փեշիդ ներքեւը. մինչեւ յաւիտեան. ամէն...

1774. մայիսի 3. Տիրուհի Չամչեց

Աղապասպանիդ կարօտով շատ շատ քարեւ կրնէ: Ժամանակ չունեցաւ աս օրերս ձեզի գիր գրելու»⁴:

Ինճիճյանի մայրը, անկասկած, մեծ ոգու եւ սրտի տեր կին էր ու չափազանց աստվածապաշտ: Նամակի մեջ հիշատակված Աղեքսանդրը Ինճիճյանի եղբայն է, ով նույնպես գտնվել է սուրբ Ղազարում: Վերջինս մահացել է 1814 թվականին: Աղեքսանդրը երբեիցե չի ստորագրել Ինճիճյան, նա մշտապես ստորագրում էր Միքայելյան, որն իրենց ընտանեկան ազգանունն էր, իսկ Ինճիճյան ազգանունը Ղուկասի կողմից էր հնարված⁵: Նամակում Ինճիճյանի մայրը հիշատակում է իր Չամչյան ազգանունը, նա նամակի մեջ նշված Հակոբոսի եւ համբավավոր Միքայել Չամչյանի քույրն էր: Նամակի մեջ Տիրուհի Չամչյանը նշում է, որ իրեն մեծ ուրախություն է պատճառել որդու՝ Ղուկասի հոգեւոր կոչում ստանալը, իսկ դա տեղի է ունեցել 1774 թվականին: Այն հանգամանքը, որ Ինճիճյանի մայրական կողմը նշանավոր Չամչյաններն էին, խոսում է այն մասին, որ Ինճիճյանը իր համբավավոր ազգականներից ենթագիտակցորեն պիտի ժառանգած լիներ հայկական հարցերով զբաղվելու ճաշակը, լուսավորություն տարածելու ձգտումն ու գրական գործունեությամբ զբաղվելու մղումը: Սա արդեն բավական էր. չմոռանանք նաեւ, թե ինչ միջավայրում էր ապրում Ղուկաս Ինճիճյանը, իսկ նրա ուսուցիչ Ստեփանոս Ազոնցն անկասկած դրական ազդեցություն է ունեցել Ինճիճյանի մտքի զարգացման ու ճիշտ նկարագիր տալու մեջ: Հենց Ստեփանոս Ազոնցից էր ժառանգել աշխարհագրությամբ եւ հնախոսությամբ զբաղվելու ճաշակը:

Ղուկաս Ինճիճյանը 1779 թ. ձեռնադրվում է քահանա⁶:

4 Հ. Ն. Անդրիկյան, նշվ. աշխ., էջ 42:

5 Անդ:

6 Մերոպ վարդապետ ճանաչեան, Պատմություն արդի հայ գրականության, հտ. Ա, Վենետիկ, 1953, էջ 45:

Մինչև 1786 թվականը այդքան շատ տեղեկություններ չկան Ինճիճյանի գործունեության վերաբերյալ, հավանաբար այս ընթացքում նա մտորում էր իր անելիքների, իր գործունեության ոլորտների մասին:

1786 թ. վերջերին վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ մնում է չորս տարի՝ զբաղվելով ուսուցչությամբ: 1790 թ. կրկին վերադառնում է Վենետիկ:

1791 թ. հրատարակում է իր գիտական երախայրիքը՝ «Տեսութիւն Համառօտ Աշխարհագրութեան» աշխատությունը: Աշխատությունը գրված է աշխարհաբարով, հրատարակվել է Սուրբ Ղազարում 1791 թ. դեկտեմբերի 20-ին, եւ գրքի շապիկի վրա դրոշմված է՝ «*հրամանաւ մեծաւորաց*»: Այն Ասիայի, Եւրոպայի, Աֆրիկայի եւ Ամերիկայի երկրների աշխարհագրության համառոտ պատմություն է: Առաջաբանի մեջ հեղինակը խոսում է երկասիրության պատրաստման նպատակի մասին՝ նշելով, որ ցանկացած մարդու մեջ կա բնական սեր՝ աշխարհը ճանաչելու, եւ ամենահեշտ ու դյուրին միջոցը այս ցանկությունն իրականացնելու ճանապարհին աշխարհագրության մասին գիրք կարդալն է: Ինճիճյանը բացատրում է, թե ինչու է իր աշխարհագրությունը համառոտ՝ գրելով, որ ինչպես անփորձ մեկը չի կարող միանգամից երկար ճամփորդություն կատարել, այնպես էլ չի կարող իսկույն աշխարհագրության մեծածավալ գիրք կարդալ, ուստի նպատակահարմար չի գտել ծանրաբեռնել իր աշխարհագրությունը «...*նահանգներու, գաւառներու, եւ քաղքերներու անուններով, ուսկից համ մը չառնէր նորավարժ մը. եւ անոր ներհակ պատմական եւ ժամանակագրական ծանօթութիւններ դրինք, որով նորավարժը կարդալով զուարճանայ, եւ աւելի ընդհանուր տեղեկութիւնները սորվի ամէն մէկ աշխրթի վրայ, քան թէ ի մասնաւորի օտար ու անծանօթ անունները: ...Ասոր համար իւրաքանչիւր աշխարհաց ամէն նահանգները չիդրինք, այլ միայն ավելի գլխաւորները»⁷: Ինճիճյանն իր աշխատության մեջ հպարտություն է ապրում, որ Հայաստանն ունի առավելություն մյուս երկրների նկատմամբ, քանի որ դրախտը այստեղ է եղել, Նոյ Նահապետի տապանը Արարատ լեռան վրա է իջել, եւ առաջին քրիստոնյա թագավորն իր ազգի Աբգար թագավորն է եղել: Համառոտ լինելով հանդերձ՝ այս գործը չափազանց հետաքրքիր է ու կարեւոր:*

Ինճիճյանը 1786 թ. վերադարձել էր Կ. Պոլիս, որտեղ մնացել էր չորս տարի: Վերադառնալով Վենետիկ՝ նա իր հետ տանում էր մեծ սերը Պոլսի հանդեպ: Հենց այդ սերն էր, որին գումարվեցին նրա աշխարհագրական անուրանալի հմտությունները, եւ ծնվեց «Ամարանոց Բիւզանդեան» աշխատությունը: Այս գործը տպագրվել է 1794 թ., երբ Ինճիճյանն արդեն երեսունվեց տարեկան էր: Կ. Պոլսում ապրելու չորս տարիների ընթացքում երիտասարդ Ինճիճ-

7 Ղ. Ինճիճյան, Տեսութիւն Համառօտ Աշխարհագրութեան, Վենետիկ, 1791, էջ 3-4:

յանին չէր կարող չհրապուրել Բոսֆորը, նա չէր կարող չզինովնալ շրջակայքի գեղեցկությամբ. այս գործն էլ հենց նրա այդ զգացողությունների արտահայտումն էր: Անկասկած, «Ամարանոց Բիւզանդեան» աշխատության մեջ խառնված են Ինճիճյանի՝ որպես գիտնականի եւ բանաստեղծի զգացումները: Ն. Անդրիկյանի կարծիքով՝ Ինճիճյանի ճկուն ու վայելուչ լեզուն, որ նկատելի է նրա արձակում, չի փայլում այս չափածո գործում⁸: Առաջին մասն արձակ է, որտեղ «*Ծանօթութիւնք աշխարհագրականք առ հասարակ նեղուցին Կոստանդնուպօլսոյ*» խորագրով՝ նեղուցի անունն է լուսաբանում, հետո անցնում նրա երկարությանը, նեղուցի բացման կամ փակման մասին եղած ավանդություններն ու կարծիքները հաղորդելուն, հետո երկրի մասին ծանոթություններ տալով՝ անցնում է բյուզանդական կայսրերին ու օսմանյան թագավորներին, նկարագրում եկեղեցիները, մենաստանները եւ այլն: Երկրորդ մասն սկսվում է «Ամարանոց Բիւզանդեան» քերթվածքով, նկարագրում է Բոսֆորի ափերը, գյուղերը, բլուրները, լեռները: Չափածո այս գործը երկու մասի բաժանված ութնյակներ են, որ ավարտվում են «ին» նույնահանգով:

«Ամարանոց Բիւզանդեան»-ը 1833թ. թարգմանվել է իտալերեն եւ ֆրանսերեն: Այս երկասիրությունը մեծ ընդունելություն գտավ եւրոպական շրջաններում. ահա թե ինչ է գրում Ինճիճյանի ֆրանսիացի բարեկամներից մեկը Փարիզից. «*Չեմ տարակուսիր ձեր այս պատուական ծանօթութիւններով եւ հմտալից տեսութիւններով զարդարուն գործին՝ կատարելագոյն թարգմանութեամբ մը կրկին լոյս տեսնելուն: Քաղաքիս գրագէտները առ ալժմ գայն ուրախութեամբ ընդունեցան, եւ Գաղղիոյ նշանաւոր թերթերը, Moniteur, Mereurie etrange, Journal Litteraire, Journal tipographique գովութեամբ խօսեցան անոր վրայ: Գերմանական լրագիրներէն ունանց մէջ ալ հաճութեամբ գովեստներ կարդացի անոր մասին*»⁹: Այս գործը Բոսֆորի վերաբերյալ լավագույն տեղեկությունների շտեմարան է՝ երբեւէ տրված պատմաբանների կողմից: Ինճիճյանն իր գործը կատարյալ ներկայացնելու համար օգտվել է բյուզանդական հեղինակներից, խորհուրդ հարցրել նաեւ թուրք հեղինակներից՝ անձամբ այցելելով իր նկարագրած վայրերը: Հավանաբար, օգտվել է նաեւ նշանավոր հանրագիտակ Երեմիա Չելեպի Զեոմուրճյանի աշխատություններից:

Ղուկաս Ինճիճյանը հասարակական մտորումներն ու գաղափարներն ավելի բացահայտ արտահայտել է հիմնադրած պարբերականներում: Նա ոչ միայն խմբագրել է այդ պարբերականների մեջ զետեղված նյութերը, այլեւ ինքն է կազմել ու շարադրել թե՛ խմբագրականները, թե՛ ակնարկները եւ թե՛ մյուս նյութերը:

8 Հ. Ն. Անդրիկյան, նշվ. աշխ., էջ 45:

9 Տե՛ս «Մխիթարեան Յոթելեան». 1701-1901, Վենետիկ, 1901, էջ 101:

Ղուկաս Ինճիճյանը ԺԹ. դարի առաջին տասնամյակում եղել է «Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդեան» պարբերականների հրատարակիչն ու խմբագիրը:

«Ազդարարից» հետո «Տարեգրություն»-ը երկրորդ պարբերականն էր հայ իրականության մեջ եւ առաջին պարբերականն էր, որ լույս է տեսնում աշխարհաբար: Ինչպես նշում է Գարեգին Լեւոնյանը, «*Վենետիկեան տարեգրի լեզուն քառականին մատչելի էր թե՛ բարձր, թե՛ ռամիկ ժողովրդի ընթերցանութեան*»¹⁰: Այն տպագրվում էր Վենետիկի Ս. Ղազար վանքի տպարանում: Տպագրվել է 1800-1802 թվականներին: Հրատարակված երեք հատորների հոդվածներն ու նյութերը շարահյուսել է Ինճիճյանը: «Տարեգրություն»-ը հրատարակվում էր տարվա վերջում, եւ յուրաքանչյուր առանձին հատորի մեջ գետեղվում էին նախորդ տարվա ընթացքում կատարված դեպքերի, հատկապես քաղաքական, եկեղեցական, մշակութային նորությունների մասին ակնարկներ:

1805 թ. բուժման եւ աշխարհագրական որոշ վայրեր այցելելու նպատակով Ինճիճյանը դարձյալ տեղափոխվում է Կ. Պոլիս: Բայց, Ստեփանոս Ազոնցի խոսքերով, նրա կարիքը Վենետիկում զգալի էր: Ինճիճյանն իր հետ Կ. Պոլիս է տանում Ազոնցի «Ընդհանուր աշխարհագրութեան»՝ Հայաստանին նվիրված հատորը եւ ներածության մասը: Կ. Պոլսում գտնվելու ժամանակ իր զբաղմունքները շատ էին. Ինճիճյանը նախ հետեւում է Եւրոպայում տեղի ունեցող իրադարձություններին, հետո նաեւ պատրաստում է Օսմանյան պետության աշխարհագրությունը: Եռսհատոր այս աշխատությունն Ինճիճյանն ավարտում է 1806 թվականին: Առաջին հատորը տպվել է 1804 թվականին: Այս գործի մաս պիտի կազմեին նաեւ այն հատորները, որ Ինճիճյանն իր հետ բերել էր Կ. Պոլիս՝ ավելի լավ քննելու, բայց 1815 թ. հրդեհը ոչնչացրեց Ինճիճյանի ամբողջ գրադարանը:

Այս հատորներից երեւում է աշխարհագրությամբ զբաղվելու՝ Ինճիճյանի հմտությունն ու մեծ կարողությունը, նաեւ այն, որ Ինճիճյանն այդտեղ դրել էր իր հոգին ու սիրտը: Նա չափազանց շատ էր սիրում Կ. Պոլիսը, իր սերը Կ. Պոլսի հանդեպ ծնում էր նաեւ սեր այն ամենի հանդեպ, ինչը կապված էր Կ. Պոլսի հետ, ձգողական մի ուժ կար, որ կապում էր Ինճիճյանին, մանավանդ ԺԸ. դարի վերջին քառորդում Օսմանյան կայսրությունը դեռ հզոր էր: Ինճիճյանն այն սակավաթիվ հայերից էր, ով հսկայական տեղեկություններ ուներ Օսմանյան տերության ամբողջ վարչական կազմի, քաղաքական, զինվորական, տնտեսական, կրոնական խնդիրների եւ այն տարբերությունների մասին, որ կային Օսմանյան կայսրության բազմազգ շրջաններում:

¹⁰ Գ. Լեւոնյան, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 8:

Ղ. Ինճիճյանը շատ հարգված եւ ընդունված էր Տյուզյան գերդաստանի կողմից, գոյություն ունեցող փոխադարձ համակրանքի արդյունքում էլ ծնունդ առավ «Արշարունյաց ընկերությունը»:

Ղուկաս Ինճիճյանն իր «Ազգասեր» աշխատության առաջաբանում գրում է, որ «Արշարունյաց ընկերության» հիմնադրման մեջ կարելի էր դերակատարում են ունեցել երկու երիտասար Տյուզյաններ՝ Հակոբ եւ Մկրտիչ Չելեպիները¹¹, իսկ Ղուկաս Ինճիճյանը կարգվել է ընկերության «*խնամակալ եւ հոգաբարձու*»¹², նրան է հանձնվել վարչությունը: Ինճիճյանն ու ընկերությունը կարծես անբաժանելի մարմին ու ոգի լինեին մի անհատի մեջ:

1803-1820 թթ. Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ լույս է տեսնում նաեւ «Եղանակ Բյուզանդեան-Բագմավէպ» պարբերականը: Կարելի է ասել, որ այն «Տարեգրութեան» տրամաբանական շարունակությունն էր, քանի որ միայն փոխված էր ձեւը, իսկ խմբագիրը, քաղաքը, տպարանը եւ, որ ամենակարեւորն է, ծրագիրն ու նպատակը նույնն էր՝ լուսավորության տարածումը: Լեզուն դարձյալ աշխարհաբարն էր:

«Եղանակ Բյուզանդեանը» հրատարակվում էր յուրաքանչյուր տարվա սկզբում՝ ներառելով հետեւյալ բաժինները.

- ա) Նոր տարի-նոր գիտելիք, բարոյական խորհրդածութիւններ,
- բ) Պատմութիւն օդերեւութականաց-բժշկական եւ բնական այլ եւ այլ տեղեկութիւններ,
- գ) Գուշակութիւն օդերեւոյթ փոփոխութեանց. այս բաժնի մեջ ներկայացվում էին յուրաքանչյուր ամսվա օրն ու բնության երեւոյթների գուշակությունները,

դ) Զբօսարան ուսմանց-գիտնական հատվածներ, նաեւ քաղաքական դեպքեր ու իրադարձություններ, բանասիրական, ուսումնական, արվեստագիտական եւ եկեղեցական, պատմական հոդվածներ, սովորույթներ եւ այլն¹³:

Մխիթարյան միաբանության հանձնարարությամբ՝ «Եղանակ Բյուզանդեան» պարբերականի ղեկավարությունը ստանձնեց Ղուկաս Ինճիճյանը, քանի որ նա մեծ հեղինակություն էր վայելում թե՛ միաբանության այրերի եւ թե՛ արեւմտահայ ամիրաների շրջանում: Բացի այդ՝ հեշտությամբ կարող էր կարգավորել պարբերականի հրատարակության գործը: Ուշագրավ են հատկապէս «Եղանակ»-ի մեջ զետեղված պատկերները. ԺԹ. դարի սկզբին ոչ մի հայերեն հանդես չէր կարող մրցել «Եղանակ»-ի մեջ զետեղված ընտիր պատկերների հետ: Յուրաքանչյուր առանձին գրքի մեջ ամսեամիս տպագրված նկարներին կցված էին ուրույն առակներ, հիմնականում՝ կենցաղագրական:

11 Ղ. Ինճիճյան, Ազգասեր, Վենետիկ, 1815, էջ 4:

12 Մեսրոպ վարդապետ Ճանաչեան, նշվ. աշխ., էջ 40:

13 Գ. Լեւոնյան, նշվ. աշխ., էջ 10:

Սկսած 1815թ. Արշարունյաց ընկերությունն իր վրա է վերցրել նաև «Եղանակ Բյուզանդեան» տարեթերթի ծախսերը¹⁴: «Արշարունյաց ընկերության» ծախսերով է հրատարակվել նաև Ղուկաս Ինճիճյանի «Ազգասեր» երկասիրությունը:

Սա մի կարեւոր գործ էր, որ մեծ հաջողության եւ գնահատանքի պիտի արժանանար: Այն քննադատվեց միայն աշխարհաբարով գրված լինելու պատճառով: Այդ կապակցությամբ Մահտեսի Կարապետը գրում է. «Ազգասեր անուանեալ գիրքն շատ հաճելի եղեւ հասարակաց, այլ տիրեցան տեսանելով աշխարհաբար լինելն, որ մեզ ծանր եւ անսիրտ թուի. ուստի իսկ եւ իսկ թարգմանեցին ընտիր եւ սարգ ոճի ի հայկական քարքառ»¹⁵: Գրաբարով էր միայն առաջաբանը, որտեղ հեղինակը ներկայացնում է ազգի պարտականությունները:

Ղ. Ինճիճյանի երկի հիմնական նպատակն էր ազգասիրություն սերմանել յուրաքանչյուր հայի մեջ: Առաջաբանից հետո ներկայացվում են անհատի պարտականությունները ընկերության եւ համայնքի մեջ, ազգասիրության անհրաժեշտությունը, անմիաբանության հետեւանքները, հայ ազգի թերությունները: Այնուհետեւ հեղինակը հայրենասիրության օրինակներ է բերում հույների եւ հռոմեացիների պատմությունից, ներկայացնում է Պետրոս Մեծի վարքն ու գործունեությունը ու գիրքն ավարտում Վաղարշակ թագավորի եւ Ներսես Մեծի՝ իր համար երկու գերագույն հայրենասեր այրերի հայրենասիրության օրինակները ցույց տալով:

Աշխատելով Արշարունյաց ընկերությունում ու լինելով «Եղանակ»-ի խմբագիրը՝ Ինճիճյանը չէր դադարում զբաղվել աշխարհագրությամբ: Նրա «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» աշխատությունն ամբողջությամբ պատրաստ էր արդեն 1812 թվականին: Այս գործի պատրաստման մեջ իրեն օգնել էր Հ. Կարապետը: Ինչպես տեսնում ենք Ազոնցի՝ Ինճիճյանին ուղղված նամակից, գործը չտպագրվեց 1812 թ., քանի որ ուներ թերի կողմեր եւ պետք է մշակվեր. «Ընթերցաք զգաւագին գանգատու քո որ յադագս Հինն Հայաստանի, զոր կարծենք թէ յառաջ քան զգրել քո առ մեզ, արարեր եւ Հ. Կարապետին բերան ի բերան, եւ զյուծումն տարակուսանացոյ ընկալար ի նմանէ... այժմ առ քեզ ունելով զվաստակակից քո, դու եւ նա ըստ ներելոյ ժամանակին, ընդօրինակեսցիք զայն մաքուր. եւ առ իւրաքանչիւր գլուխ կամ յօդ. եւ կամ այլ գլխաւոր տեղի նշանակեսցես ուրոյն թէ ո՛ր տեսակ գրով ունի տպագրիլ, եւ այլ ինչ ինչ զոր դիտես ի նմա եւ այնպէս առաքեսցես»¹⁶:

14 Հ. Ն. Անդրիկյան, նշվ. աշխ., էջ 105-106:

15 Անդ, էջ 106:

16 Անդ, էջ 107:

Ինճիճյանը դեռ չէր հրատարակել առ գործը, բայց արդեն գիտական միջավայրում աշխարհագետի մեծ համբավ ուներ: Սա երեւում է նաեւ Շահան Զրպետյանի՝ Ինճիճյանին ուղղված նամակից, որտեղ նա շատ է կարեւորում Ինճիճյանի «ստորագրությունները» աշխարհագրության վերաբերյալ: Շահան Զրպետյանի ջանքերով Փարիզի Արեւելյան լեզուների ինստիտուտում բացվեց նաեւ հայկական բաժինը, եւ նա հայագիտության հարցերով դիմել էր Ինճիճյանին:

Ինճիճյանն իր «Ստորագրութեան» վրա շատ ժամանակ էր ծախսել, այն կրկին ծուլել ու մշակել էր: 1819թ. գիրքն արդեն տպագրության պատրաստ էր: Հենց այդ տարին էր, որ Ինճիճյանը ստիպված հեռանալու էր Կ. Պոլսից եւ հաստատվելու Օդեսա քաղաքում: Ներքաղաքական փոթորիկը շատ բան պիտի ավերեր Կ. Պոլսում, որն Ինճիճյանն այսքան դժկամությամբ էր թողնում: Այդ իրադարձություններից Ինճիճյանը վախ է ունեցել, որ հաստատվել է Ռուսաստանում: Մինչը 1823 թ. տեղեկություններ չկան Սուրբ Ղազարի հետ շփումների մասին. երեւում է՝ այս երկու տարիները խորը մտորումների ու լռության տարիներ են եղել:

1822 թ. լույս տեսավ Ինճիճյանի «Ստորագրութիւն Հին Հայաստանայցը»: Այս սքանչելի երկասիրության մեջ Ինճիճյանը ներկայացնում է մեծ Հայքի 15 նահանգները՝ խոսելով յուրաքանչյուրի մասին առանձին-առանձին, նաեւ նրանց մեջ գտնված գավառների մասին՝ տեղեկություններ տալով տեղի, գետերի, լեռների, վանքերի, բնակչության, նրանց սովորությունների մասին: Աշխարհագրական կարեւոր տեղեկություններ է տալիս՝ քաղված ազգային եւ օտար աղբյուրներից: Գրքի առաջաբանում հեղինակը նշում է, որ շատ դժվարություններ է ունեցել, բայց նորից անցել է աղբյուրների վրայով, ճշգրտել կասկածելի բաները: «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» աշխատությունը մեծ հավատ է ներշնչում ընթերցողին, քանի որ Ինճիճյանը նշում է իր աղբյուրը: Գրքի հրատարակությունից մեկ դար անց գերմանացի լեզվաբան, հայագետ Հայնրիխ Հյուբշմանը հայկական տեղանունների վերաբերյալ գործը գրելիս շատ հղումներ է կատարում Ինճիճյանից: Հնախոս վարդապետի անունը հայտնի էր նաեւ Եւրոպայում: Նշանավոր ֆրանսիացի հայագետ Սեն Մարտենը գրում է. «Հայր Ղուկաս Ինճիճյանը Ս. Ղազար կղզում հիմնադրված Հայկական միաբանության (Մխիթարյան միաբանության) ամենահմուտ, ամենաբանիմաց եւ ամենաշնանասեր անդամներից մեկն է»¹⁷:

«Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» աշխատությամբ Ինճիճյանն աշխարհագրության հեղինակ է դառնում: Այն ժամանակ, երբ ավարտում էր Ստորագրությունը, Ինճիճյանը բանակցությունների մեջ էր Սուրբ Ղազարի

¹⁷ Այան Հովհաննէս, նշվ. աշխ., էջ 48:

հետ՝ իր մեկ այլ գործը՝ «Դարապատումի» հատորները տպելու համար: Ինճիճյանն այնպիսի գիտնական էր, որ պետք է աշխատություն ունենար նաեւ այս ժանրում: Այս գործն արդեն պատրաստ էր 1822 թ., բայց միակ արգելքը լեզուն էր. գործն աշխարհաբար էր, իսկ Սուրբ Ղազարում գրաբար էին պահանջում: Ազոնցը Ինճիճյանին ուղղված նամակում թվարկում է գործը գրաբարով շարադրելու բոլոր պատճառները: Ինճիճյանը խնդրում էր, որ իր պատմության առաջին հատորը աշխարհաբար տպվեր՝ խոստանալով ամբողջ գործը թարգմանել գրաբար: Հետեւյալ նամակի մեջ երեւում է, որ Սուրբ Ղազարում վերջապես ընդունելի է եղել Ինճիճյանի խնդրանքը. «Նամակդ որ ի 10 մարտի եհաս առ մեզ ի 6 ապրիլի: Ծանեաք ի գրելոյդ՝ եթէ կարի շատ է փափաքդ ի տպագրութիւն այսր մասին կամ հատորոյ դարապատում գրողդ յաշխարհաբար լեզու, բայց տեսաք միանգամայն՝ զի հաւանելով քո եւ մերումն առաջարկութեան՝ յօժարեալ ցուցանես զքեզ գրաբար յօրինել ոչ միայն զմնացեալ հատորսն այլ եւ զնոյն իսկ աշխարհաբար տպագրելին, փասն որոյ զիջանելով հաճել զփափաքդ, յանձնեցաք Հ. Սամուէլին զի ի դէպ ժամու դիցէ զայն ի գործ եւ ծանուցէ զծախսն»: Ինճիճյանն ինքն էլ ցանկանում էր այս գործը գրաբար հրատարակել ոչ նրա համար, որ այդպես էին ուզում, այլ ինքն էլ գտնում էր, որ այս ծավալի գործը ավելի լավ կլինէր գրաբար գրել, քան աշխարհաբար, որը դեռ շատ աղքատ ու անշուք էր¹⁸: Առաջաբանի մեջ միայն գրաբարով գրում է. «Զայս գործ բազմաշխատ ի բարբար գրող հիւսուածոց զոգցես արժան էր արտադրել, բայց թախանձանք ընթերցասիրաց անտեղեակ եղելոց գրաբարին՝ սերտ ըղձալերտեալք ի լուր ընթերցուածոյ բանի պատմութեանց՝ ոչ ներեցին մեզ գրկեալս կացուցանել ի ճաշակացն՝ որոց փափագէինն, այլ կամայ ակամայ հարկ յանձին կալեալ յաշխարհիկ յօրինել ի բարբար, որ ապաքէն տասնապատիկ առավել ծանրացոյց մեզ աշխատութիւն բանի՝ զոյով լեզու անկիրթ աղքատին, եւ արդարեւ անյարմար ի յերիւրել զիօսս ըստ բերելոյ ոճոյ՝ եւ ըստ կարգի արտաճառութեան ասպարիզի բազմազգի բանախօսութեանցն, որով հարկադրեալ ձգէր զմեզ զարտուդիլ իմ ծնքումն ռամկակերպ ոճոյն կամ կրկնութեան խօսից»¹⁹:

Թեւ Ինճիճյանը նշում է, որ ավելի լավ կլինէր այսչափ մեծածավալ գործը գրաբար գրել, բայց, անկասկած, նա աշխարհաբարի կողմանկից էր եւ ամեն կերպ փորձում էր իր՝ աշխարհաբար գրելը պատճառաբանել ընթերցողի խնդրանքով: Նա տարիներ առաջ կարողացավ հասկանալ, որ ապագան աշխարհաբարինն է: «Դարապատում»-ի առաջին հատորը լույս տեսավ 1824 թ., երբ արդեն մահացել էր Ազոնցը: «Դարապատումը» կես դարի պատմություն

18 Հ. Ն. Անդրիկյան, նշվ. աշխ., էջ 149:

19 Գ. Ինճիճյան, Դարապատում, Վենետիկ, 1824, հտ. Ա., էջ 12:

է, 8 հատորով, եւ ներկայացնում է եւրոպական պետությունների՝ 1750-1800 տարիների քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի պատմությունը: Երկար տարիներ է աշխատել Ինճիճյանն այս աշխատության վրա՝ նվիրելով իր կյանքի զգալի մասը: Երբ լույս էին տեսնում վերջին հատորները, Ինճիճյանն արդեն Վենետիկում էր: Խառը ժամանակներ էին հայության համար: Կաթոլիկ դավանանք ունեցողները հալածվում էի Կ. Պոլսում: Նրանք ստիպված էին հաճախ թողնել տուն, տեղ, հայրենիք եւ հեռանալ: Կ. Պոլսի կաթոլիկ հայերին ներկայացված մեղադրանքների մեջ նշվում էր նաեւ այն, որ նրանք իբր գաղտնի հարաբերությունների մեջ են եւրոպական երկրների հետ եւ ծրագրեր են մշակում իրենց անկախության համար:

1828 թ. սկզբներին, երբ սաստկացան հալածանքները, Ինճիճյանը, Կ. Պոլսում մնալը վտանգավոր համարելով, նույն տարվա մայիսին ցամաքային ճանապարհով վերադառնում է Վենետիկ: Նա ճամփորդում էր՝ ուսումնասիրելով ու ուսումնասիրում էր՝ ճամփորդելով: Իր աշխատությունների մեջ նա շատ է խոսում Իտալիայի եւ, մասնավորապես, Վենետիկի մասին, այստեղ նա ապրել էր իր կյանքի մի մասը եւ մեծ սեր ուներ դեպի այս անկյունը: Ուսումնասիրությունները պատրաստելու ժամանակ Ինճիճյանը չի կտրվել իր միսիոներական առօրյա աշխատանքներից: Նա 1832 թ. հրատարակել է հատուկ կրոնական ժողովածու՝ «Վարք սրբոց»՝ աշխարհաբար եւ դյուրամատչելի լեզվով: Ընթերցողներին նա առաջարկում էր միշտ հավատարիմ մնալ կաթոլիկ եկեղեցու պատգամներին: Կարելի է նաեւ նրա «Աղօթագիրք» աշխատությունը:

Վենետիկում մեկ տարի առաջ մահացած Գաբրիել Ավետիքյանի փոխարեն Ինճիճյանն ընտրվում է միաբանության փոխառաջնորդ՝ պաշտոնավարելով մինչեւ կյանքի վերջը: 1833 թ. հուլիսի 2-ին, ապրելով 75 տարի, մահացավ միսիոնարյան կրոնավորը, որ *«ի գիտութեան մասին եղև և մին յանուանի վարդապետաց Ուխտիս մերոյ եւ Ազգին եւ որ ի կենակցութիւնս էր գուարճախօս և քաղցրաբան, հանդարտ ի ճառելն ձայնիւ քարքառով եւ կարգաւորեալ, որ եւ ըստ կերպարանացն էր արգոյ եւ պատկառելի, որով ձգեցան ի սէր սորա եւ ի մեծարանս, որք մի անգամ կենակից եղևն ընդ սմա»*²⁰:

Ղ. Ինճիճյանի մահից հետո տպագրվեց նրա «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատությունը: Ստորագրության առաջաբանում Ինճիճյանը հաղորդում է, որ կիրատարակի եռահատոր «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատությունը, բայց 1815 թ. հրդեհը մոխիր դարձրեց այս գործը, եւ Ինճիճյանը ստիպված եղավ նորից տքնաշան աշխատել, պրպտել, համեմատել եղած աղբյուրները՝

20 Մ. Մաղաք-Ռեովիլյանց, Կենսագրութիւն երեւելի արանց, Վենետիկ, 1839, էջ 685:

Հնախոսությունը անթերի հրատարակելու համար: Այն ավարտեց կյանքի վերջին տարիներին, բայց բազմավաստակ վարդապետի փափագը չկատարվեց...

Աշխատության մեջ ներկայացվում է պատմական Հայաստանի վիճակը, խոսվում է գետերի, լճերի, լեռների, վաճառականության, բնակչության, կառավարման ձեւերի, նախարարությունների, բանակի, սովորությունների, օրենքների, ազգային առաքիլությունների ու թերությունների, լեզվի ու արվեստի, կրոնի եւ այլնի մասին:

Ղ. Ինճիճյանի աշխարհագրական ժառանգության մեջ պետք է առանձնացնել նաեւ Ագոնցի՝ «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» բազմահատոր գործի Ասիա բաժինը, որը հեղինակել է Ղուկաս Ինճիճյանը. այն տպագրվել է Վենետիկում 1806 թվականին:

Մեծ ու արժեքավոր է եղել Ղուկաս Ինճիճյանի թողած ժառանգությունը, նա հեղինակել է բազմաժանր ու բազմազան աշխատություններ, զբաղվել տարբեր բնագավառներով, բայց նրա գործունեության ամենակարեւոր ոլորտը եղել է հնախոսությունը: Այստեղ տեղին է մեջբերել Ալան Հովհաննեսի խոսքերը. «Քերթող, հնասէր եւ խուզարկու միտք մ'եղավ Ինճիճեան վարդապետն, որ կրնայ ամենայն իրաւամբ Հայր հայկական Հնախօսութեան յորջորջուիլ»²¹:

Ինճիճյանը կատարել է հայկական հնախոսության համար այն, ինչ Չամչյանը պատմության համար, հարկ է նշել նաեւ, որ իր գործը գալիս է ամբողջացնելու Չամչյանի պատմության տեղագրական ու հնախոսական մասը: Նրա գործերը աղբյուր են Հայաստանի աշխարհագրությամբ ու հնախոսությամբ հետաքրքրվող ուսումնասիրողների համար: Անկասկած, թերություններ էլ կան, շատ բաներ իր ժամանակին համապատասխան է արել, երբ դեռեւս որոշ ձեռագրեր ու պեղումներ անհայտ էին:

Անկասկած, Ղուկաս Ինճիճյանը եղել է հայ հասարակական մտքի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը, ով իր բեղմնավոր գործունեությամբ հարստացրել է մեզ հասած գիտական ժառանգությունը:

21 Ալան Հովհաննես, նշվ. աշխ., էջ 46:

РЕЗЮМЕ

Гукас Инчичян один из видных представителей Венецианского Братства Мхи-таристов, выдающийся историк, географ, этнограф, филолог, поэт, журналист – редактор. Инчичян как мыслящий человек, ко всем важным вопросам своего времени подходил с девизом “Все во благо и просветительство собственного народа”. Он был из тех мыслителей, кто своей деятельностью боролся за сохранение индивидуальности армянского народа. Наследство оставленное Гукасом Инчичяном велико. Он опубликовал ряд историко-филологических и географических работ, в которых был богатый материал об истории, географии, топографии Древней Армении. Наиболее важные из них “Подпись Древней Армении”, “Археологическая география земли Армянской”, первая часть А многотомника “География четырех сторон света”. Выступил в роли редактора и издателя периодических изданий “Тарегрутюн” и “Еганак Бюзандян”. Издал на средства компании Аршаруныц рукопись “Азгасер”. Издал также рукопись “Дарапатум”. Инчичян был самым уникальным представителем армянской общественной мысли, который оставил великое наследство.

SUMMARY

Ghukas Inchichyan was one of the prominent members of Mechitarist Congregation of Venice. He was a famous historian, geographer, ethnographer, philologist, poet, journalist and editor. As a thinker Inchichyan approached all important questions of his time by having motto of his own nation's profit of prosperity and lighting. He was a thinker who struggled for the protection of Armenian nation's essence. He has left a great heritage. He has published several historic-philological, geographical works, which contain rich content about old Armenian history, geography and topography. “Storagrutyun Hin Hayastanyac”, “Hnaxosutyun ashxarhagrakan Hayastanyac ashxarhi”, “Ashxarhagrutyun choric masanc ashxarhi” are the most important ones of volume A of the first part of a series of works. He appeared as a publisher and editor of “Taregrutyun” and “Eghanak Byuzandyan” periodicals. He published “Azgaser” work with the help of the spending of Arsharunyac company. He also published “Darapatum” work. Inchichyan was one of the most original representatives of Armenian social conception.